

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՊԻ Եւ ԳՀԺ

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐԻ ԷԶԵՐՈՒՆ

Հայրենադարձութիւնը հայ ժողովուրդի վերջին հարիւրամեայ պատմութեան մնայուն երեւոյթներէն է, որ, ընթացք առնելով Հայաստանի առաջին հանրապետութեան կարճատեւ ժամանակաշրջանէն ետք, շարունակուեցաւ Խորհրդային Հայաստանի տարիներուն եւս եւ ներկայիս՝ երրորդ հանրապետութեան պայմաններուն մէջ: Այս օղակին մէջ մեծ կարեւորութիւն ունի 1946—1948 թթ. իրագործուած Մեծ Հայրենադարձութեան բազմակողմանի ուսումնասիրութիւնը՝ ի մասնաւորի «Էջմիածին» ամսագիրի մեկնաբանութիւններուն մէջ:

Յօդուածը իր մէջ չի բովանդակեր մանրամասնօրէն անդրադարձ կատարել ու քննել Մեծ Հայրենադարձութեան պատմական իրադարձութիւնները, այլ կուսումնասիրէ «Էջմիածին» ամսագիրի 1945—1949 թթ. համարներու մէջ «Մեծ Հայրենադարձութեան» կամ «Ներգաղթ»-ի վերաբերեալ արծարծուող խնդիրները:

«Մեծ Հայրենադարձութեան» առնչուող նիւթերն ամսագիրին մէջ բազմազան են. եւ անոնց ուսումնասիրութիւնն ունի կարեւոր նշանակութիւն, քանի որ Հայ Եկեղեցւոյ կողմէ կատարուած նախաձեռնութիւններն ու կազմակերպչական աշխատանքները՝ պատմական իրադարձութեան վերաբերեալ, մեծ մասամբ տեղ չեն գտած հետազօտողներու աշխատանքներուն մէջ:

Նկատի ունենալով յօդուածի ծաւալը՝ մենք նպատակաշարմար գտանք անդրադառնալ միայն մէկ քանիին:

* * *

1945 թ. Յունիսի 16-ին՝ Ս. Էջմիածինի մէջ կայացած համագգային եկեղեցական ժողովի¹ աւարտին, նորընտիր Վեհափառին՝ Տ. Տ. Գէորգ

¹ «Էջմիածին», 1945, Զ.—Է., էջ 27—43:

Զ. Զեօրէքճեանի «...համախմբուիլ Մայր Հայրենիքին շուրջ եւ բոլոր ջանքերով նպաստել նրա անսայթաք վերելքին ու բարգաւաճման»² կոչը, յար եւ նման էր Խորմեան Հայրիկի 1895 թ. ամերիկահայութեան ուղղած ուղերձին, ուր կ'ըսէր. «Ու տայր ինձ, որ աւետիս տայի ձեզ, իբրեւ Նոյան աղանին, թէ ցամքեցաւ ջրհեղեղը, դարձէք ձեր հայրենի աշխարհը»³: Հայոց հայրապետի կոչը արձագանգ կը գտնէ եւ Սփիւռքի, եւ Հայրենի մամուլի, եւ Հայրենիքէն վերադարձող պատգամաւորներու արտայայտութիւններու մէջ, որոնք Հայրենիքի պատկերը կ'ուրուագծէին պատմամշակութային կոթողներու նկարագրութեամբ նաեւ:

Պատգամաւորները մեկնելէն առաջ, որպէս խորհրդանիշ, իրենց հետ հայրենի հող վերցուցած էին՝ վերադարձին խորհրդաւոր արարողութեամբ զայն փոխանցելու տուեալ համայնքներու հայ երիտասարդութեան, որով հողի խորհուրդը կը պատգամուէր: Ամսագիրը իր համարներուն մէջ կը նկարագրէ պատգամաւորներու կողմէ Հայրենի հողի յանձնման արարողութիւնը Գահիրէի, Աղեքսանդրիոյ մէջ եւ այլուր⁴: Անոնք վերադարձին ոչ միայն հայրենասիրական աշխատանք ծաւալեցին Սփիւռքի համայնքներուն եւ Մայր Հայրենիքի կապերու սերտացման, այլեւ կրկնապատկուած եռանդով յետագային սկսան աշխատիլ «Ներգաղթ»-ի յաջող կազմակերպման համար⁵:

Հայաստանի մէջ Խորհրդային իշխանութեան հաստատման քսանհինգ ամեակին առթիւ Խորհրդային Միութեան Ժողովրդական Կոմիսարներու խորհուրդը 21 Նոյեմբեր 1945 թ. սփիւռքահայութեան ներգաղթը Խորհրդային Հայաստան իրականացնելու մասին որոշում կայացուցած էր՝ տասնեակ սփիւռքահայերու խնդրանքին համաձայն, որոնց բաղձանքի մասին հայրենի ղեկավարութեան կողմէ բազմիցս նամակներ առաքուած էին Խորհրդային Միութեան ղեկավարներուն, յատկապէս Ստալինին, սակայն անհետեւանք մնացած էին:

Խորհրդային Հայաստանի 25-ամեակին առթիւ Անթիլիասի վեհաբանին մէջ հանգանակութիւն տեղի ունեցած էր, որուն հասոյթը պիտի յատկացուէր արդիական սարքաւորումով կօշիկի գործարան մը հիմնելու Խորհրդային Հայաստանի մէջ. այդ նուէր էր հայրենիքին՝ Սուրիոյ, Լիբանանի, Կիպրոսի հայութեան կողմէ⁶: Դամասկոսի մէջ եւս կաթողիկոսական

² «Էջմիածին», 1946, Ա., էջ 19:

³ Անդ:

⁴ Անդ:

⁵ «Էջմիածին», 1946, Ա., էջ 21—29:

⁶ «Էջմիածին», 1946, Բ.—Գ., էջ 84:

փոխանորդ Տ. Եփրեմ արք. Տոհմունիի նախագահութեամբ, նոյն նպատակի համար, կառաջանայ նուիրահաւաքի յանձնախումբ⁷:

1946 թ. Յունուարին (19 Յունուար 1946 թ.) նորընտիր կաթողիկոս Ամենայն հայոց Հայրապետ Տ. Տ. Գէորգ Զ. Շրջաբերականով հանդէս կու գար «Արտասահմանի Առաջնորդներուն», ուր կը տեղեկացնէր՝ 2 Դեկտեմբեր 1945 թ. հրապարակուած օրէնքի մը համաձայն կը թոյլատրուէր «գաղութահայ ժողովուրդին գալ խորհրդային Հայաստան, «որպէսզի վերջ տրուի նորա տառապալից կեանքին եւ հնարաւորութիւն ստեղծուի իր եղբայրների հետ միասին խաղաղ ապրելու, միասին աշխատելու եւ միասին զարգացնելու հայ մշակոյթը»⁸: Հայրապետը կը տեղեկացնէր նաեւ այդ նպատակով Հայաստանի մէջ կազմակերպուած ներգաղթի կոմիտէի մասին, որուն գլխաւոր առաքելութիւններէն մէկը պիտի ըլլար՝ կազմակերպել հայրենադարձուող ժողովուրդի փոխադրութիւնն ու տեղաւորումը Մայր Հայրենիք, հոգալ անոր ապրուստը, որպէսզի միասնական աշխատանքով նպաստեն հայրենիքի տնտեսութեան եւ մշակութային վերելքին: Միաժամանակ կոչ կուղէր Բարեգործական ընկերութիւններուն եւ ազգային մեկենասներուն՝ իրենց աջակցութիւնը բերելու Ներգաղթի աննախադէպ երեւոյթին⁹: Կառաջարկէ տեղական պայմաններու համապատասխան կազմակերպել նիւթական աջակցութիւն՝ ի գործ դնելով հետեւեալ միջոցները.

1. Տեղւոյն համայնքի քաղաքական իշխանութեան գիտութեամբ Թեմի Երեսփոխանական ժողովն ու Կեդրոնական վարչութիւնը Թեմի Առաջնորդի նախագահութեամբ կազմեն խնամակալութիւն, «որ ժամանակաւորապէս ի պահ ընդունէ գաղթող ընտանիքների անվաճառ մնացած անշարժ կալուածները...» եւ «...ի հաշիւ խնամակալութեանդ յանձնուած վաճառելիք կալուածքի հնարաւոր չափով աւանսաւորել (կանխավճարել.— Ա. Ֆ.) նոցա, ապագայում վաճառուած կալուածքի դրամից գանձելու պայմանով»:

2. Կանխավճար տալու համար փոխարինաբար գանձել տուեալ Թեմին բոլոր եկեղեցիներու դրամը ժամանակաւորապէս՝ վաճառուելիք կալուածներու հաշուին գանձելու եւ վերադարձնելու պայմանով:

3. Տեղի հարուստներու ներքին համաձայնութեամբ յանձնախումբեր կազմակերպել «պատկառելի» դրամագլուխ գոյացնելու, որուն

⁷ Անդ, էջ 8:

⁸ «Էջմիածին», 1946, Ա., էջ 12:

⁹ «Էջմիածին», 1946, Ը.—Թ.—Ժ., էջ 4:

նպատակը պիտի ըլլայ կանխավճարել գաղթողներուն՝ յետագային անոնց կալուածներէն գոյացած դրամէն ստանալու պայմանով:

4. «Լայն» հանգանակութիւն կազմակերպել, որմէ գոյացած դրամով նպաստել կարիքաւորներուն¹⁰:

Իրօք, Ներգաղթի լուրը մեծ խանդավառութիւն ստեղծած էր ամէնուրեք: Ամսագիրի հաւաստմամբ՝ խանդավառութիւն կը տիրէր Պաղեստինի Եաֆա եւ Երուսաղէմ հայ համայնքներէն ներս: Ազգայինները անյապաղ կուզէին իմանալ, «...թէ երբ պիտի սկսի ներգաղթի արձանագրութիւնը: Խանդավառութիւնը ընդհանուր է. առանց դաւանանքի, դասակարգի եւ կուսակցական խտրութեան»,— կը գրէ յօդուածագիրը¹¹:

22 Յունուար 1946 թ. Պէյրութի ֆրանսական համալսարանի բժշկական, դեղագործական, ատամնաբուժական, քիմիայի, փաստաբանական եւ այլ բաժիններու ուսանողներ (շուրջ 65 ստորագրութիւն) նամակ կը յղեն Ներգաղթի Տեղական կոմիտէի նախագահին. կ'ողջունեն ներգաղթի մասին հրապարակուած որոշումը եւ փափաք կը յայտնեն, որ առաջին իսկ առիթով հնարաւորութիւն ստեղծուի մեկնելու Հայաստան եւ Երեւանի համալսարաններուն մէջ կատարելագործելու իրենց ուսումը¹²: Պէյրութի Ամերիկեան համալսարանի ուսանողները եւս կ'ողջունեն ներգաղթի արձանագրութիւններն սկսելու հրահանգը եւ նամակ կը յղեն Լիբանանի ներգաղթի կոմիտէին, ուր նոյնպէս փափաք կը յայտնեն Հայաստանի համալսարաններու մէջ իրենց ուսումը կատարելագործելու հեռանկարի իրականացումը: «Այս համոզումով, յարգելի յանձնախումբ, կը խնդրենք, որ մեզի նկատի ունենաք որպէս արձագանք[զ]ող ու պատրաստ՝ առաջին հերթին ներգաղթելու»¹³: Իրենց ուսումը կատարելագործելու դիմում կը ներկայացնեն Պէյրութի Ամերիկեան համալսարանի եւ Ամերիկեան Ճիւնիի գոլէճի 41 հայ ուսանողուհիներ¹⁴: Կոմիտէն նամակ ստացած էր Թաւրիզէն, ուր կը տեղեկացուէր, որ Իրանի հայ երեխաները զրկուած են մայրենի լեզուով ուսում ստանալէն՝ հայկական դպրոց չունենալուն պատճառով: Կը խնդրեն 1947 թ. ներգաղթի առաջի օրերուն իրենց հնարաւորութիւն տրուի Հայրենիք մեկնելու եւ ուսումը շարունակելու Երեւանի Պետական համալսարանի մէջ¹⁵:

¹⁰ Անդ, էջ 4:

¹¹ «Էջմիածին», 1946, Բ.—Գ., էջ 14:

¹² Անդ, էջ 20—21:

¹³ Անդ, էջ 21:

¹⁴ Անդ, էջ 22:

¹⁵ «Էջմիածին», 1947, Ե.—Զ., էջ 75—76:

1946 թ. առաջին ամիսներուն Լիբանանի մէջ սկսած էին արձանագրութիւնները: Ամսագիրի յօդուածագիրը կը գրէ, որ Լիբանանեան մամուլի ճամբով կ'իմանան թէ 8 օրուան ընթացքին ներգաղթի գրասենեակներուն մէջ արդէն արձանագրուած հայերուն թիւը հասած էր 40 հազարի¹⁶, եւ սփիւռքահայու առօրեայ խօսակցութիւնը դարձած էր ներգաղթը: Բանուորը՝ Հայրենիքի մէջ իր ապագայ գործի, արհեստաւորը՝ իր գործիքները նորերով փոխարինելու, առեւտրականը իր ապրանքները հայրենիք փոխադրելու մասին¹⁷: Սակայն Հայֆայէն Հ. Մարտիրոսեան կը նշէ, որ միաժամանակ կային խմբաւորումներ, որոնք «խոհեմութեան, լրջութեան, հեռատեսութեան» ժամանակավրէպ երգեր կ'երգէին ժողովուրդին, Հայաստանի մէջ ցուրտի սաստկութեան առասպելներ կը հիւսէին...»¹⁸:

Վաղուց սպասուած լուրը հասած էր Փարիզ: Խորհրդային Միութեան Փարիզի դեսպանատունը Հայ Ազգային Ընդհանուր Միութեան կեդրոնական վարչութեան կը հաղորդէր հայերու դէպի Խորհրդային Հայաստան ներգաղթի լուրը¹⁹: Մարտիլահայ 60 մեծ ու փոքր գործարաններու գործատէրերէն ոմանք կը նախաձեռնեն իրենց մեքենաներով եւ կազմածներով Հայաստան գալու եւ զարկ տալու կօշիկի ճարտարարուեստին, որուն իրականացման համար յառաջացած վարչութիւնը 20 միլիոն դրամագլուխ տրամադրած էր: Ֆրանսահայ դերձակները եւս կը պատրաստուին ներգաղթէն առաջ իրենց սարքերով մեկնիլ Հայաստան²⁰: Ոչ պակաս խանդավառութիւն կը տիրէր պոլսահայերու շրջանակէն ներս, ուր ամէն օր հարիւրաւոր հայրենակիցներ կը դիմէին հիւպատոսարան արձանագրուելու խնդրանքով²¹: Խանդավառութիւնը մեծ էր Անդրյորդանանի խորերը գտնուող Աժլուն գիւղին մէջ, ուր ընդամէնը 4 ընտանիք եւ 4 հիւանդապահուհիներ կ'ապրէին: Օրիորդ Խաթուն Աբրահամեան կը պատմէ վեց փոքրիկ տղոց մասին, որոնք փողոցներով կը շրջէին «Հայաստան պիտի երթանք» կոչերով²²: Ան կը նկարագրէ փոքրիկ տղոց ոգեւորութիւնը, որոնք կը դրսեւորուէին խաղի միջոցով. «...ամէնէն աւելի անոնց հայրենասիրութիւնը գրաւեց իմ ուշքս»: Այդ տղաքը կարդալ,

¹⁶ «Էջմիածին», 1946, Բ.—Գ., էջ 15:

¹⁷ Անդ:

¹⁸ Անդ:

¹⁹ Անդ, էջ 16:

²⁰ Անդ, էջ 23:

²¹ Անդ, էջ 17:

²² Անդ, էջ 18:

գրել չէին գիտեր, բայց կը խօսէին հայերէն, որովհետեւ անոնց դպրոցը եղած է իրենց տունը, եւ դաստիարակը՝ իրենց մայրը²³:

Տասնմէկամեայ Օշին Մարթայեան «Ինչու կ'ուզեմ Հայաստան երթալ» շարադրութեան մէջ կը բացատրէ, թէ ինչու կը ցանկայ ներգաղթել Հայաստան: Պատանիի համար առանց Հայրենիքի ազգերը դատապարտուած են կորստեան: «...շատ ազգեր կորսուած են տարիներու ընթացքին, բայց հայ ազգը միշտ բարձր մնաց, որովհետեւ հայը ուր որ ալ ըլլայ, յիշած է իր հայրենիք»: «Մենք մեր հայրենիքը կ'ուզենք երթալ ոչ թէ օգտուելու, այլ օգտակար ըլլալու համար»²⁴:

Հալէպ հրատարակուող «Ալ Հաւատես» («Վթարներ».— Ա. Ֆ.) արաբական օրաթերթը 18 Փետրուար 1946 թ. համարով կ'ողջունէ հայերու դէպի Հայաստան ներգաղթի աւետիսը եւ բարձր կը գնահատէ Հալէպի ներգաղթի կոմիտէի կողմէ մեկնողներու ցուցակագրման աշխատանքներու հեզասահ ընթացքը: Ան բարձր կը գնահատէ հայ ժողովուրդի զաւակներու տաժած խոր յարգանքը այն պետութեան հանդէպ, որ, տարաբախտ ժողովուրդին տէր հանդիսանալով, զանոնք փրկեց մահուան ճիրաններէն եւ ապրելու նոր յոյս պարգեւեց անոնց, որպէս լիիրաւ քաղաքացի: «...կը փափաքինք այս երկրին լիակատար գոհունակութիւնն ու գնահատանքը արտայայտել արձանագրուողներուն եւ իրենց հոս մնացած կարճատեւ ժամանակամիջոցին յայտնաբերած վարուելակերպին համար: Անոնք փաստեցին թէ իսկական քաղաքացիներն են այս երկրին համար»²⁵:

Ներգաղթի եւ հայոց պահանջներուն մասին անդրադարձ կատարած է Եգիպտոսի «Ալ Ահրամ» («Բուրգեր».— Ա. Ֆ.) թերթը: «Աշխարհի բոլոր հայերը կը պահանջեն, որ արեւելեան նահանգները Սովետ Հայաստանին կցուին: Այս նահանգները ծաղկեալ Հայ բնակչութիւն մը ունէին չորս հազար տարիէ ի վեր՝ մինչեւ 1915»²⁶: Եգիպտոսի «Ալ Ահրամ» թերթէն քաղուած՝ Հալէպի «Ալ Հաւատիս» թերթը կը փոխանցէ, որ 1946 թ. Սուրիոյ եւ Լիբանանի 170 000 հայերէն 135 000 արձանագրուած է, իսկ Պաղեստինի 15 000-էն՝ 12 000-ը: Թղթակիցը կը մեկնաբանէ անոնց Միջին Արեւելքէն հեռանալու որոշումը. «Հայրենիքի հանդէպ այս կարօտի

²³ Անդ:

²⁴ Անդ:

²⁵ Անդ, էջ 74:

²⁶ «Էջմիածին», 1946, Բ.—Գ., էջ 74:

զգացումներէն զատ ո՛չ մէկ պատճառ պիտի մղէր զիրենք հեռանալու արաբ երկիրներէն...»²⁷:

Կիպրոս հրատարակուող յունարէն «Էլեֆթերոս Թիփոս» («Ազատ մամուլ».— Ա. Ֆ.) օրաթերթը «Բազմաչարչար հայերը իրենց հայրենի երկիրը կը վերադառնան» յօդուածով կանդրադառնայ 1915 թ.-էն ետք հայերու հոսքին դէպի այդ տարածքը, կիպրական պետութեան աջակցութեան եւ կիպրահայերու ներգաղթի կազմակերպական աշխատանքներուն²⁸:

«Էջմիածին» ամսագիրի 1946 թ. տարբեր համարներու մէջ կան Սփիւռքի համայնքներէն Հայաստան ներգաղթածներուն վիճակագրական տուեալները, որոնց համաձայն՝ 1946 թ. Հայաստան ներգաղթած են Լիբանանէն, Դամասկոսէն, Հալէպէն, Իրանէն, Պոլկարիայէն (Վառնա, Սելիստրա եւ Դովրիչ քաղաքներէն)²⁹, Յունաստանէն (2380 մարդ)³⁰, 19 Օգոստոս 1946 Սուրիայէն 1030 հայ, Իրանէն՝ 500³¹, Սեպտեմբերին Սուրիայէն եւ Լիբանանէն՝ 2417 հայ, Սեպտեմբերին կրկին Սուրիայէն եւ Լիբանանէն՝ 6000 հայ: Վեցերորդ եւ վերջին կարաւանը՝ Վառնայէն՝ 700 մարդ³²:

1946 թ. Հայրենիք ներգաղթած են 51 000 հայ³³: Անոնց մէջ եղած են «գիւղացիներ, կառուցող բանուորներ, մետաղագործներ, տեքստիլագործներ (հիւսուածագործներ), զանազան արհեստի տէր անձնիք եւ ինտելիգենցիա»³⁴:

1947 թ. Յուլիսի սկիզբը Սուրիայէն եւ Լիբանանէն՝ 2331 մարդ (աւելի քան 450 ընտանիք), որոնցմէ «200 ընտանիք գիւղացիներ են». կային արհեստաւորներ, փականագործներ, կօշկակարներ, վարորդներ, կառուցողներ եւ այլն³⁵: Յուլիսի վերջը՝ Սուրիայէն եւ Լիբանանէն՝ 3120 մարդ (678 ընտանիք): Օգոստոսի 6-ին Յունաստանի Սալոնիկ քաղաքէն եւ շրջաններէն Պաթում կը ժամանէ 1942 մարդ (կայ տարբերակ, որ Յունաստանէն առաջին կարաւանով եկողներու թիւը եղած է 125 ընտանիք՝ 982 մարդ, որոնք տեղաւորուած են Նոր Պայագիտի եւ Կոտայքի

²⁷ «Էջմիածին», 1946, ԺԱ.—ԺԲ., էջ 72:

²⁸ «Էջմիածին», 1948, Ա.—Բ., էջ 77:

²⁹ «Էջմիածին», 1946, Զ.—Է., էջ 72:

³⁰ «Էջմիածին», 1946, Ը.—Թ.—Ժ., էջ 88:

³¹ Անդ:

³² Անդ, էջ 59—74, էջ 88, 92:

³³ «Էջմիածին», 1946, ԺԱ.—ԺԲ., էջ 74:

³⁴ Անդ:

³⁵ «Էջմիածին», 1947, Է.—Ը., էջ 7:

շրջանները)³⁶: 7-ին Սուրիայէն եւ Լիբանանէն՝ 160 ընտանիք, որոնցմէ 66 ընտանիք տեղաւորուած են Երեւան, 42-ը Կոտայք եւ 34-ը՝ Բերիա աւանի շրջանը³⁷: Օգոստոս 16-ին Սուրիայէն եւ Լիբանանէն՝ 3151 մարդ³⁸: 21 Օգոստոսին Սալոնիկէն Պաթում կը ժամանէ Յունաստանէն Խորհրդային Հայաստան վերադարձող հայերու Բ. խումբը՝ 708 ընտանիք՝ 2456 մարդ³⁹: 4 Նոյեմբերին Պէյրութէն եւ Հայֆայէն Պաթում կը ժամանէ 3910 մարդ⁴⁰: 20 Նոյեմբեր 1947 թ.՝ Սուրիայէն եւ Լիբանանէն ներգաղթի վերջին կարաւանի առաջին խումբը⁴¹ եւ Աթէնքէն ու Պիրէյէն՝ 1837 հայ⁴²: 24 Նոյեմբերին Պաթում կը ժամանէ ԱՄՆ-ի հայրենադարձ հայերու առաջին խումբը՝ 151 մարդ⁴³: 29 Դեկտեմբեր 1947 թ. Ֆրանսայէն Պաթում կը ժամանէ 2059 մարդ՝ մեծ մասամբ բանուոր տնայնագործներ⁴⁴:

1948 թ. Ռումինիայէն Հայաստան կը ներգաղթեն 153 ընտանիք՝ 540 մարդ. անոնք բոլորը կը տեղաւորուին Երեւանի եւ մերձակայ աւաններու մէջ: Ռումինիոյ երկրորդ խումբը՝ 140 ընտանիք, որոնք ապաստան կը գտնեն Լենինական եւ Կիրովական⁴⁵: Նոյն տարուան Օգոստոսին Աղեքսանդրիայէն առաջին խումբով Պաթում կը ժամանէ 222 ընտանիք, իսկ Սեպտեմբերին՝ 205 ընտանիք՝ 630 մարդ. «Հայրենադարձ հայերի մէջ կան բարձրորակ շատ բանուորներ, էլեկտրամեխանիկներ, ավտոմեխանիկներ, ինժեներներ, բժիշկներ, ուսուցիչներ եւ արհեստավորներ»⁴⁶:

1949 թ. Նիւ Եորքէն Պաթում կը ժամանեն խումբ մը հայեր⁴⁷:

«Էջմիածին»-ի համարներուն մէջ նկարագրուած են Սփիւռքի համայնքներէն ներս Ներգաղթի արձանագրութեան պահերն ու ներկաներու արտայայտութիւնները ներգաղթի կազմակերպման վերաբերեալ: Օրինակ՝ Հալէպի զանազան թաղամասերուն մէջ բացուած էին արձանագրութեան 21 գրասենեակներ, ուր մարդոց բազմութիւնը անպակաս էր: Հալէպի թղթակիցը կը նկարագրէ, թէ ինչպիսի խօսակցութիւններ տեղի

³⁶ Անդ, էջ 10:

³⁷ Անդ:

³⁸ Անդ, էջ 11:

³⁹ Անդ, էջ 10:

⁴⁰ «Էջմիածին», 1947, ԺԱ.—ԺԲ., էջ 34:

⁴¹ Անդ:

⁴² Անդ, էջ 35:

⁴³ Անդ, էջ 34:

⁴⁴ «Էջմիածին», 1948, Ա.—Բ., էջ 45:

⁴⁵ «Էջմիածին», 1948, Է.—Ը.—Թ., էջ 71:

⁴⁶ Անդ, էջ 71—72:

⁴⁷ «Էջմիածին», 1949, Ա.—Բ., էջ 23:

կունենային գրասենեակներու դրան առաջ: Ծերունի մը կը պոռար. «Քառասուն տարի է, որ կը սպասեմ այս օրուան, ձգեցէք որ առաջին անգամ ես արձանագրուիմ»: Ուրիշ գրասենեակի պաշտօնեան արձանագրուող քիլիսցիին կը հարցնէ, թէ եթէ Քիլիսը վերադարձնեն ո՞ր կը նախընտրէր երթալ. «Ո՛հ, ո՛չ,— կը պատասխանէ քիլիսցին,— շատ մարդիկ կորսնցուցի հոն: Ես Սովետ Հայաստան պիտի երթամ, այդ հողը ամէն ինչ մոռցնել կու տայ»: Ուրիշ մըն ալ կը շտապէր արձանագրուելու, որպէսզի Հայրենիք մեկնելով՝ իր զինուորական ծառայութիւնը կատարէր Հայրենիքին⁴⁸:

Արձանագրութիւնները մեծ խանդավառութիւն ստեղծած էին Դամասկոսի մէջ եւս, ուր երեւոյթը նոյնպէս «բնական եւ արդար» կը համարուէր արաբական պատասխանատու շրջանակներու կողմէ⁴⁹:

Դրասենեակներ կային նաեւ Պէյրութի մէջ. հոն արձանագրուողներուն թիւը այնքան շատ էր, որ մարդիկ այդ գրասենեակներուն առջեւ հերթի կը կանգնէին: Պէյրութի «Ժողովուրդի ձայն» թերթի թղթակիցը կը նկարագրէ, թէ արձանագրութիւններուն ընթացքին ներկաները ինչ թեմաներ կ'արծարծէին⁵⁰:

Ամսագիրի 1947 թ. թիւ 5—6 միացեալ համարին մէջ կայ «Հայերի ներգաղթը Եթովպիայից» խորագիրով փոքրածաւալ թղթակցութիւն, որուն հեղինակը, իր այցելութեան ընթացքին հանդիպելով Ատիս-Ապապայի հայկական Ս. Գէորգ եկեղեցւոյ քահանային, կ'իմանայ, թէ Տէր հօր նախագահութեամբ կազմուած է ներգաղթի կոմիտէ, որպէսզի արձանագրէ հայրենիք ցանկացողները: 1947 թ. Մայիս—Յունիս ամիսներուն արձանագրուողներուն թիւը հասած էր 185-ի: «Արձանագրութիւնների թուղթերը Գահիրէ պիտի ղրկուին, եւ Գահիրէից պիտի գան հրահանգները արձանագրուած անձերի ներգաղթի պայմանների մասին»⁵¹:

«Էջմիածին» ամսագիրն անդրադարձ կատարած է նաեւ Թեմական Առաջնորդներու ներգաղթի մասին արտայայտած խօսքերուն: Հարաւային Ամերիկայի կաթողիկոսական պատուիրակ Տ. Գարեգին արք. Խաչատուրեանի «Ներգաղթ կամ վերադարձ դէպի տուն», Յունաստանի թեմի Առաջնորդ Տ. Կարապետ արք. Մազլումեանի ճառը՝ ուղղուած Գոքինոյի 4000 հայրենաբաղձ հայերուն: Եգիպտոսի Առաջնորդ Տ. Մամբրէ արք. Սիրունեանի

⁴⁸ «Էջմիածին», 1946, Բ.—Գ., էջ 19:

⁴⁹ Անդ:

⁵⁰ Անդ, էջ 20:

⁵¹ «Էջմիածին», 1947, Ե.—Զ., էջ 86:

20 նոյեմբեր 1946 թ. նամակը Ամենայն հայոց կաթողիկոսին⁵²: Անդրադարձ կայ հայրենադարձ հայերու բնակելի աւաններու վերաբերեալ⁵³:

Մեծ Հայրենադարձութեան թեմայով յօդուածներու եւ նամակագրութեան որոշ մասը քաղուած է Սփիւռքի յառաջդիմական մամուլէն կամ յառաջդիմական խմբակցութեան մաս կազմող անհատներէ, որոնք միակողմանի բնոյթ կը կրեն եւ չեն արտացոլար, չեն բացայայտեր թեմայի բազմակողմանի եւ ամբողջական պատմութեան ծալքերը: Ամսագիրի էջերէն կը բացակային յետադիմական մամուլի արձագանգը կամ Հայաստանի ներգաղթի կոմիտէ կարաւաններու հետ կապուած խնդիրները, որոնց հանդիպած ենք Հայաստանի Ազգային Արխիւներուն գաղտնի փաստաթուղթերու մէջ: Կը բացակային նաեւ Սփիւռքի համայնքներու ներգաղթի կոմիտէներու վարած քաղաքականութեան, ինչպէս նաեւ Հայրենիք հասնող հայրենադարձներու դժուարութիւններուն, Սփիւռքի իրենց հարազատներուն ուղարկած նամակներուն վերաբերեալ գրութիւններ:

Հասկնալի է, որ «էջմիածին» ամսագիրի 1945–1949 թթ. համարներու մէջ տեղ գտած բացթողումները կատարուած են այդ տարիներու Խորհրդային իշխանութեան վարած քաղաքական նկատառումներով, եւ ամենեւին ալ կարելի չէ բացասական գնահատական տալ այն շնորհակալ աշխատանքին, զոր 75 տարիներու ընթացքին իր անձնակազմով կատարած է Մայր Աթոռ Ս. Էջմիածինի բանբերը:

Վերջապէս, ամսագիրի համարներուն մէջ առանձնակի տեղ ունին այն ստեղծագործութիւնները, որոնց տողերու ետին թաքնուած են հայրենագուրկ եւ տարերկրի հայ ժողովուրդի տաղանդաւոր զաւակներու գրիչին պատկանող տողեր, որոնք, իրենց հայեացքը Հայոց աշխարհի բարձրաբերձին ուղղած, տարիներ շարունակ թախիծով ու կարօտով կը սպասէին Հայրենիքէն աւետուող «Ներգաղթ»-ի կենսաբեր ու թովիչ կանչին⁵⁴:

Ջաւեհ Մելքոնեան-ի⁵⁵ «էջմիածին» խորագիրով բանաստեղծութիւնը.

«Ըսէ՛ անոնց թէ մենք հիմա կը սպասենք ձեր մէկ նշանին.
Թէ պատրաստ ենք, թէ մենք հայ ենք, տառապած ենք ու վիրաւոր,
Ըսէ՛ անոնց թէ անկեղծ է խօսքը այս նոր բանաստեղծին
Ախ շուտ ըրէ՛, անապարհ՝ ով փրկարար էջմիածին»:

⁵² «էջմիածին», 1947, Գ.–Դ., էջ 16–20:

⁵³ «էջմիածին», 1947, Ե.–Զ., էջ 73:

⁵⁴ Տե՛ս «էջմիածին», 1946, Բ.–Գ., էջ 4; 12; 14; 23:

⁵⁵ Անդ, էջ 9:

Հալէպի կրթասիրաց վարժարանի Գ. կարգի աշակերտ Արմէն Պետրեանի⁵⁶ «Հրաժեշտ Հալէպին» խորագիրով բանաստեղծութիւնը.

«Հոս ծնած եմ, ահա կ'երթամ,
Դուն շէն մնաս Հալէպ ֆաղաֆ,
Աղըդ ու հացդ ես շատ կերայ,
Դու շէն մնա՛ս, ծննդավայր»:

Իրօք, Հայրենադարձութիւնը տեղի ունեցաւ, բայց Հայրենի տուն վերադառնալ ցանկացողներու ոչ բոլորին վիճակուած էր գալ Հայրենիք:

РЕЗЮМЕ

В статье рассматриваются вопросы «Великой репатриации», события как на Родине, так и в «Иммиграции» или «Великой репатриации» в различных общинах диаспоры, изданные в 1945—1949 гг. в журнале «Эчмиадзин». Там также отражаются вопросы организационной работы «Иммиграции», рабочему порядку комитетов в рамках межобщинной жизни и продвижении караванов на Родину с 1946 по 1948 год. Затронуты вопросы деятельности «Иммиграционного» офиса в Армении, процесс принятия и расселения репатриантов, а также услуги, предоставляемые армянами диаспорам.

SUMMARY

The article discusses the issues of “Great Repatriation”, events both in the homeland and in “Immigration” or “Great Repatriation” in various communities of the diaspora, published in 1945—1949 in “Etchmiadzin” magazine. It also reflects the issues of the organizational work of Immigration, the working order of committees within the framework of intercommunal life and the promotion of caravans to their homeland from 1946 to 1948. The issues of the activity of the “Immigration” office in Armenia, the process of receiving and resettling returnees, as well as the services provided by the Armenians to the diaspora were touched upon.

⁵⁶ Անդ, էջ 23: